**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 29

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել 2021 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը

- Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկի խճ. 2/30 հասցեում գտնվող 0,01313 հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության. 10-003-0004-0380 ծածկագրով հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:
  զեկուցող Ռ. Մկրտչյան
- Վայք համայնքի սեփականություն համարվող Արին գյուղում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 2,2798 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-009-0111-0078) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
  զեկուցող Ռ. Մկրտչյան
- Վայք համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Վայոց Ձորի մարզ, Վայք համայնք, քաղաք Վայք, Ալավերդյան 15/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 112 քմ հողատարածքը անհատույց, առանց մրցույթի <<ՍԻՄՈՆՅԱՆ>> կրթական հիմնադրամին հատկացնելու վերաբերյալ:
  զեկուցող Ռ. Մկրտչյան
- Վայք համայնքի վարչական տարածքի Ազատեկ գյուղում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 4,00406 հա վարելահողը վարձակալության տրամադրելու մասին:
  զեկուցող Ռ. Մկրտչյան
- Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը աճուրդային եղանակով օտարելու, վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին:
  զեկուցող Ռ. Մկրտչյան

- <<Վայք քաղաքի արևիկ մարզադաշտ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին
  զեկուցող Ն. Հովհաննիսյան
- Վայք համայնքի ղեկավարի հաղորդումը 2021 թվականի երկրորդ եռամսյակի համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին:
  զեկուցող Ն. Հովհաննիսյան
- Համայնքի բյուջեում և նախահաշիվներում փոփոխություններ կատարելու մասին:
  /զեկուցող Ն. Հովհաննիսյան/
- Վայք համայնքի ավագանու 24/05/2021թ. «<<ՎԱՅՔԳՈԼԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ » թիվ 23 որոշումն(ՆԻՍՏ N 2) անվավեր ճանաչելու մասին:
- <<Նորավանք սպորտային ակումբ>> ՍՊԸ-ի 2021թ. օգոստոսի 3-ի լայնամաշտաբ ծրագրի ներկայացում:
- Վայք համայնքի սեփականություն համարվող Ազատեկ գյուղում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 49,67581 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
  զեկուցող Ռ. Մկրտչյան
- Հողամասը վարձակալության և/կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմից աճուրդավար և արձանագրող նշանակելու մասին
  զեկուցող Գ. Մուշկամբարյան:
- <<Նորավանք սպորտային ակումբ>> ՍՊԸ-ի և Վայքի համայնքապետարանի միջև 2021թ. հուլիսի 28-ին կնքված <<Գույքի անհատույց օգտագործման պայմանագրում>> փոփոխություններ կատարելու մասին:
  /զեկուցող Վ. Գասպարյան/

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 30**

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃ. 2/30 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,001313 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ, ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ կետին, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշմամբ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն, ըստ քաղաքի գլխավոր հատակագծի, Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկի խճ. 2/30 հասցեում գտնվող 0,01313 հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության. 10-003-0004-0380 ծածկագրով հողատարածքը ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով, կադաստրային արժեքով/1877,7 դրամ՝ 1 քմ-ի համար/ օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 31**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն համարվող Արին գյուղում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 2,2798 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-009-0111-0078) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 8 000 (ութ հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 32**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՎԱՅՔ, ԱԼԱՎԵՐԴՅԱՆ 15/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 112 ՔՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ <<ՍԻՄՈՆՅԱՆ>> ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Վայոց Ձորի մարզ, Վայք համայնք, քաղաք Վայք, Ալավերդյան 15/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 112 քմ հողատարածքը անհատույց, առանց մրցույթի 10 տարի ժամկետով <<ՍԻՄՈՆՅԱՆ>> կրթական հիմնադրամին <<Թումոն տուփի մեջ>> ծրագիրն իրականացնելու նպատակով, հատկացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

# Սիմոնյան կրթական հիմնադրամ
# Simonian Educational Foundation


ՀՀ Վայոց ձորի Վայք քաղաքի քաղաքապետ՝ Թարո Ավետյանին
Հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք, Շահումյան փող., 18 շենք

ՀՀ, քաղաք Երևան

29/07/2021թ

Հարգելի պարոն Ավետյան,

Սիմոնյան կրթական հիմնադրամն իրականացնում է «Թումոն տափի մեջ» ծրագիրը, որը նպատակաուղղված է Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի ուսուցումը ՀՀ մարզերի, քաղաքների և գյուղերի երեխաների համար հասանելի դարձնելուն: Թումո կենտրոնի շահառուները հանդիսանում են 12-18 տարեկան երեխաները և ամբողջ կրթական ծրագիրն իրականացվում է անվճար հիմունքներով:

ՀՀ, Վայոց Ձորի Վայք քաղաքի Մյասնիկյան և Ալավերդյան փողոցների խաչմերուկի մոտ տեղակայված հողամասի (տվյալ հողամասի հասցեն հայտնի չէ Հիմնադրամին) նախատեսվում է հիմնել «Թումոն տափի մեջ» նոր կենտրոն: Նոր կենտրոնը կազմված է լինելու շարժական հատվածներից, որի տեղադրման համար հարկավոր չէ շինարարական թույլտվություն, ինչպես նաև տվյալ հատվածները կարելի է ցանկացած ժամանակ տեղափոխել:

Ելնելով վերոգրյալից

**Խնդրում ենք**

ՀՀ, Վայոց Ձորի Վայք քաղաքի Մյասնիկյան և Ալավերդյան փողոցների խաչմերուկի մոտ տեղակայված հողամասից առանձնացնել 112 մ² հողատարածք և անհատույց օգտագործման հանձնել Սիմոնյան կրթական հիմնադրամին՝ նոր Թումո կենտրոն տեղադրելու համար:

Հողամասի դիրքը նշված է սույն գրությանը կից ուղարկվող հատակագծում: Լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք զանգահարել Անուշ Արզաքյանին +374 98 788308:

Կից ներկայացնում ենք՝
- Հիմնադրամի ռեգիստրի գրանցման վկայականի պատճեն,
- Հիմնադրամի գլխավոր տնօրենի անձնագրի պատճեն,
- Հողամասի և առանձնացվող հատվածի հատակագիծ,
- Նոր Թումո կենտրոնի նախագիծ:

Հարգանքով՝
**Սիմոնյան կրթական հիմնադրամի**
**գլխավոր տնօրեն՝ Մարի Լու Փափազյան** /

[illegible]

# ՎԿԱՅԱԿԱՆ

03 Ա 086142

իրավաբանական անձի պետական գրանցման

ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

(անվանումը)

գրանցված է պետական ռեգիստրի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ կողմից

(տարածքային ստորաբաժանման անվանումը)

Գրանցման համարը 222.160.01 [illegible]

Գրանցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը 14.10.1998

Իրավաբանական անձի [illegible] (ՀՎՀՀ) [illegible]

Իրավաբանական անձի տեսակը [illegible]

Գործունեության ժամկետը մինչև անժամկետ

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

14 [illegible] 200_ թ.

# ՆԵՐԴԻՐ 003

իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա086142 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Գտնվելու վայրը —

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, **Գլխավոր տնօրեն՝ Մարի-Լու Փոլի Փափազյան**
անձնագիր **AF0443411**, տրվ. **2002-09-30, 002** կողմից,
հասցե **Թումանյան / 1 ա շ. / բն. 15 ք. Երևան, 0001 Հայաստան**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը —

Այլ տեղեկություններ
**Գլխավոր տնօրենի մասին տեղեկությունների փոփոխություն, կանոնադրության փոփոխություն:**
**Փոփոխություն(ներ)ը գրանցվել է(են) 2011-12-05-ին**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

05 12 2011 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ N 33

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱԶԱՏԵԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 4,00406 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ, ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ>> մասին թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլխի 2-րդ կետով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի վարչական տարածքի Ազատեկ գյուղում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 4,00406 հա վարելահողը վարձակալության տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Հանձնարարել աշխատակազմին՝ ղեկավարվել ՀՀ կառավարության վերոնշված որոշմամբ և պատրաստել հողաշինական գործ՝ ՀՀ Վայոց Ձորի մարզպետին ներկայացնելու նպատակով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

### ՈՐՈՇՈՒՄ N 34

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ կետին, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ ամաձայնություն Վայք համայնքի սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝

| Հ/հ | Հողամասի օտարման նպատակը | Հողամասի գտնվելու վայրը | Մակերեսը | Մեկնարկային գինը | Հողամասի ծածկագիրը | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Սեփականության իրավունքի սուբյեկտը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| լոտ 1 | Գյուղ գործունեություն ծավալելու | գ. Փոռ | 2,74421 | 180000 | 10-043-0122-0040 | գյուղատնտեսական | արոտավայր | Վայք համայնք |
| լոտ 2 | Գյուղ գործունեություն ծավալելու | գ. Ազատեկ | 0,2002<br>0,15995<br>1,14438<br>1,55685 | 17000<br>13000<br>770000<br>100000 | 10-005-0162-0013<br>10-005-0112-0110<br>10-005-0112- | գյուղատնտեսական | արոտավայր<br>արոտավայր<br>վարելահող,<br>արոտավայր<br>արոտավայր | Վայք համայնք |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 0112 10-005-0112-0111 | | | |
| լոտ 3 | բնակելի կառուցապատում | ք. Վայք, Արշ. Մելիքյան 22/1 | 0,05441 | 1025000 | 10-003-0004-0104 | բնակավայրերի | բնակելի կառուցապատում | Վայք համայնք |
| լոտ 4 | բնակելի կառուցապատում | ք. Վայք, Արշ. Մելիքյան 9 | 0,02872 | 540000 | 10-003-0004-0382 | բնակավայրերի | բնակելի կառուցապատում | Վայք համայնք |

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 35**

<<ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎԻԿ ՄԱՐԶԱԴԱՇՏ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ, 68-րդ հոդվածներով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել <<ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎԻԿ ՄԱՐԶԱԴԱՇՏ>> հանայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշիռը՝ համաձայն հավելված 1-ի.
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

Հավելված
համայնքի ավագանու
07.09.2021թ. թիվ 35 որոշման

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Վայք քաղաքի Արևիկ մարզադաշտ

| | Տող | Ծնթ. | 2021թ (հաշվետու) | 2020թ (նախորդ) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | | | 70,914.0 |
| Ոչ նյութական ակտիվներ | 020 | | 0.0 | 0.0 |
| Ներդրումային գույք | 030 | | | |
| Բարձրարժեք ակտիվներ | 040 | | | |
| Չարտադրված (բնական ծագում ունեցող) նյութական ակտիվներ | 050 | | | |
| Կենսաբանական ակտիվներ | 060 | | | |
| Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝ | 070 | | | |
| *Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում* | *071* | | | |
| *Ներդրումներ համատեղ վերահսկվող կազմակերպություններում* | *072* | | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | | | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | 090 | | 0.0 | 70,914.0 |
| | | | | |
| Պաշարներ | 100 | | 0.0 | 376.0 |
| Դեբիտորական պարտքեր փոխանակվող գործարքների գծով | 110 | | | |
| Դեբիտորական պարտքեր չփոխանակվող գործարքների գծով | 120 | | | |
| Ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 130 | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 140 | | | |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | 150 | | 0.0 | 376.0 |
| **Ընդամենը ակտիվներ** | 160 | | 0.0 | 71,290.0 |
| | | | | |
| **Զուտ ակտիվներ (սեփական կապիտալ)** | | | | |
| Ներդրված կապիտալ | 170 | | | 71,290.0 |
| Կուտակված հավելուրդ (պակասուրդ) | 180 | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ | 190 | | | |
| Այլ պահուստներ | 200 | | | |
| **Ընդամենը զուտ ակտիվներ (սեփական կապիտալ)** | 210 | | 0.0 | 71,290.0 |
| | | | | |

| Պարտավորություններ | | | | |
| --- | --- | --- | --- | --- |
| Պայմանով ստացված ակտիվների գծով ոչ ընթացիկ հետաձգված հասույթներ | 220 | | | |
| Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ | 230 | | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | 240 | | | |
| Կոնցեսիոն ակտիվների գծով ստացված ոչ ընթացիկ պարտավորություններ | 250 | | | |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 260 | | | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | 270 | | 0.0 | 0.0 |
| | | | | |
| Պայմանով ստացված ակտիվների գծով ընթացիկ հետաձգված հասույթներ | 280 | | | |
| Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ | 290 | | | |
| Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | 300 | | | |
| Ընթացիկ պահուստներ | 310 | | | |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր փոխանակման գործարքների գծով | 320 | | | |
| Պարտքեր չփոխանակվող գործարքների գծով | 330 | | | |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | 340 | | 0.0 | 0.0 |
| **Ընդամենը պարտավորություններ** | 350 | | 0.0 | 0.0 |
| **Ընդամենը զուտ ակտիվներ (սեփական կապիտալ) և պարտավորություններ** | 360 | | 0.0 | 71,290.0 |

Ղեկավար ______ ստորագրություն — Լ.Բադալյան (Անուն Ազգանուն)

Գլխավոր հաշվապահ ______ ստորագրություն — Զ.Մկրտչյան (Անուն Ազգանուն)

______
ստորագրման ամսաթիվ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 36**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ընդունել ի գիտություն Վայք համայնքի ղեկավարի հաղորդումը բյուջեի 2021 թվականի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

Հավելված համայնքի ավագանու
07/09/2021թ. Թիվ N 36 որոշման

30.06.2021թ. դրությամբ

| Եկամտատեսակ | Նախատեսված /տարեկան/ | Նախատեսված /2-րդ եռամսյակ/ | Կատարողական /2-րդ եռամսյակ/ | Կատարման տոկոս եռամսյակային պլանի նկ. |
|---|---|---|---|---|
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 8750,0 | 2770,0 | 2078,3 | 75,0 |
| Գույքահարկ | 44157,1 | 17000,0 | 13962,1 | 82,1 |
| Տեղական տուրքեր | 8480,0 | 3726,0 | 3739,2 | 100,4 |
| Ընդհամենը գույքի և հողի վարձակալությունից եկամուտներ | 12267,0 | 6047,0 | 4331,6 | 71,6 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 206996,6 | 102921,7 | 102921,7 | 100,0 |
| Այլ եկամուտներ/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 30200,0 | 15000,0 | 13070,8 | 87,1 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 310850,70 | 147464,7 | 140103,7 | 95,0 |

| Ծախսային մաս | Նախատեսված /տարեկան/ | Նախատեսված /1-ին կիսամյակ/ | Կատարողական /1-ին կիսամյակ/ | Կատարման տոկոս /1-ին կիսամյակ/ |
|---|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 113984,4 | 58800,0 | 46994,8 | 79,9 |
| Էներգետիկ ծառայություններ | 4004,0 | 2844,0 | 2578,5 | 90,7 |
| Կոմունալ ծառայություններ | 140,0 | 50,0 | 30,4 | 60,8 |
| Կապի ծառայություններ | 940,0 | 640,0 | 465,9 | 72,8 |
| Ապահովագրական ծախսեր | 200,0 | 200,0 | 187,0 | 93,5 |
| Գործուղումներ և շրջագայությունների ծախսեր | 300,0 | 200,0 | 88,6 | 44,3 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում | 12992,9 | 6500,0 | 3858,5 | 59,4 |
| Պարտադիր վճարներ | 1 113,0 | 713,0 | 442,0 | 62,0 |
| Դրամաշնորհներ | 177325,7 | 93000,0 | 85559,3 | 92,0 |
| Սոց, նպաստներ և կենսաթոշակներ | 1000,0 | 700,0 | 700,0 | 100,0 |
| Պահուստային միջոցներ | 10000,0 | 10000,0 | 0,0 | 0,0 |
| **Վարչականի ընդամենը ծախս** | **322000,0** | **173647,0** | **140905,0** | **81,1** |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, | 47267,1 | 39850,0 | 0,0 | 0,0 |
| Վարչ.սարք ,և այլ մեքենաների սարք, | 1816,7 | 1816,7 | 1205,0 | 66,3 |
| Նախագծահետազոտական ծախսեր | 3916,2 | 1638,2 | 980,0 | 59,8 |
| **Ֆոնդային բյ. ընդամենը** | **53000** | **43304,9** | **2185,0** | **5,0** |

Վայք համայնքի ղեկավար՝ Թ. Ս. Ավետյան

Ֆին.բաժնի պետ՝ Ն. Հ. Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 37**

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի կողմից առաջարկվող հետևյալ փոփոխություններին.

1. Վայք համայնքի բյուջեի եկամտային մասում կատարել փոփոխություն, օրենքով և իրավական այլ ակտիվներով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ 1393 տողում ավելացնել 8 000 000 /ութ միլիոն/ ՀՀդրամ:
2. Վայք համայնքի բյուջեի եկամտային մասում կատարել փոփոխություն, հողի օտարումից մուտքեր եկամուտներին ավելացնել 4500000 /չորս միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Վայք համայնքի բյուջեի եկամտային մասում կատարել փոփոխություն, Վայքի կապիտալ ծախսերի նպատակային սուբվենցիա տողում ավելացնել 9 500 000 /ինը միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀդրամ:
4. Վայքի համայնքի բյուջեի ծախսային մասից գործառնական դասակարգում բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51 /Վայք համայնքի ապարատ /,4115 տնտեսագիտական դասակարգումից 1220000 /մեկ միլիոն երկու հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ տողափոխել ծախսային մասի գործառնական դասակարգում բաժին 1, խումբ 6, դաս 1, ծրագիր 51 /ընդհանուր բնույթի ծառայություններ /, 4264 տնտեսագիտական դասակարգում:
5. Վայքի համայնքի բյուջեի ծախսային մասից գործառնական դասակարգում բաժին 5, խումբ 5, դաս 1, ծրագիր 51 /Զինապարտների հաշվ., զոր. Աջակցություն /4726 տնտեսագիտական դասկարգման 500 000 /հինգ հարյուր հազար/ՀՀ դրամ տեղափոխել ծախսային մասի գործառնական դասակարգում բաժին 1, խումբ 6, դաս 1, ծրագիր 51 /ընդհանուր բնույթի ծառայություններ / 4269 տնտեսագիտական դասակարգում:
6. Վայքի համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգում բաժին 1,

խումբ 6, դաս 1, ծրագիր 51 /ընդհանուր բնույթի ծառայություններ /, 4111 տնտեսագիտական դասակարգումը ավելացնել 1 600 000 /մեկ միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամով, 4269 տնտեսագիտական դասակարգումը ավելացնել 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամով:

7. Վայքի համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51 /Վայք համայնքի ապարատ/ 4111 տնտեսագիտական դասակարգումը ավելացնել 1 800 000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամով, 4214 տնտեսագիտական դասակարգումը ավելացնել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամով, 4264 տնտեսագիտական դասկարգումը ավելացնել 3 600 000 /երեք միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամով:
8. Վայքի համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 1, խումբ 6, դաս 1, ծրագիր 51/Ընդհանուր բնույթի ծառայություններ/ 5113 տնտեսագիտական դասակարգումը պակասեցնել 3890000 /երեք միլիոն ութ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամով, 5122 տնտեսագիտական դասակարգումը պակասեցնել 2545000 /երկու միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամով, 5134 տնտեսագիտական դասակարգումը պակասեցնել 103000 /մեկ հարյուր երեք հազար/ ՀՀ դրամով:
9. Վայքի համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 4, խումբ 5, դաս 1, ծրագիր 51/Ճանապարհային տրանսպորտ/ 5113 տնտեսագիտական դասակարգումը պակասեցնել 34700000 /երեսունչորս միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամով:
10. Վայքի համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 9, խումբ 5, դաս 1, ծրագիր 51 /Արտադպրոցական դաստիարակություն / 5113 տնտեսագիտական դասակարգումը ավելացնել 38601000 /երեսունութ միլիոն վեց հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամով, 5134 տնտեսագիտական դասկարգումը ավելացնել 2119000 /երկու միլիոն մեկ հարյուր տասնինը հազար/ ՀՀ դրամով:
11. Վայքի համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 6, խումբ 4, դաս 1, ծրագիր 51 /Փողոցների լուսավորություն/ 5113 տնտեսագիտական դասակարգումը ավելացնել 4756000 /չորս միլիոն յոթ հարյուր հիսունվեց հազար/ ՀՀ դրամով, 5134 տնտեսագիտական դասկարգումը ավելացնել 262000 /երկու հարյուր վաթսուներկու հազար/ ՀՀ դրամով:
12. Վայքի համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական դասակարգման բաժին 1 , խումբ 6, դաս 1, ծրագիր 51/ Ընդհանուր բնույթի ծառայություններ/ 5129 /այլ մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական դասակարգումը ավելացնել 9500000 /ինը միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 38**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24/05/2021թ. <<<<ՎԱՅՔԳՈԼԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 23 ՈՐՈՇՈՒՄԸ (ՆԻՍՏ N 2) ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին կետով.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Անվավեր ճանաչել համայնքի ավագանու 2021թ. մայիսի 24-ի <<ՎԱՅՔԳՈԼԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 23 որոշումը (ՆԻՍՏ N 2)

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 39

<<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ-Ի 2021թ. ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԼԱՅՆԱՄԱՇՏԱԲ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել <<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացվող բազմաֆունկցիոնալ համալիր կառուցելու մասին լայնամաշտաբ ծրագիրը/կցվում է/
2. Հողհատկացման մասով ղեկավարվել օրենքով սահմանված կարգով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ
ԱԿՈՒՄԲ ՍՊԸ NORAVANK
SPORTS CLUBLLC

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ
Համայնքի ղեկավար՝ Թարո Ավետյանին

<<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ
Տնօրեն՝ Արմեն Լիսիկյան
ք. Երևան, Մաշտոցի պող. 18/8
ՀՎՀՀ 02820903
Հեռ.077525254, 011445204

ք. Վայք 03.08.2021թ.

# ԳՆՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ

Հարգելի պարոն Ավետյան,

Վայք համայնքի և <<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ միջև 28.07.2020 թվականին կնքվել է Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որով <<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ-ն ստանձնել է՝ ք. Վայք, Երիտասարդական փողոց 5 հասցեում գտնվող <<Արևիկ>> մարզադաշտի և հարակից տարածքի վերանորոգման և բարեկարգման պարտավորություն, վերջինս կատարել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, ավելին կատարել է պայմանագրով նախատեսված գումարի չափից ավել ներդրում՝ շուրջ 305,635,000 (երեք հարյուր հինգ միլիոն վեց հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ գումարի չափով, որի արդյունքում հիմնովին վերանորոգվել և բարեկարգվել է <<Արևիկ>> մարզադաշտը, տրիբունան և հարակից տարածքները:

Սակայն, <<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ-ն և վերջինիս կողմից կատարվելիք ներդրումը հայանքի, հայանքում սպորտի զարգացմանն ուղղված այսքանով չի սահմանափակվում:

Ներկայումս <<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ-ն ցանկանում է իրագործել ավելի լայնամաշտաբ ծրագիր ուղղված համալիր կառուցելուն, որը կներառի առնվազն ևս մեկ մարզադաշտ, երիտասարդական և պրոֆեսիոնալ թիմերի ուսումնական հաստատություններ, մեր թիմի և այլ թիմերի հյուրատների հարմարություններ, ինչպես նաև հատուկ ուսումնամարզական հավաքների կազմակերպման համար տարածքներ:

ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ
ԱԿՈՒՄԲ ՍՊԸ NORAVANK
SPORTS CLUBLLC

Նախատեսվում է կառուցել նաև՝ սրճարան և այլ շինություններ՝ լայն հասարակությանը սպասարկելու համար, մասնավորապես նաև ֆուտբոլային խաղերի և այլ միջոցառումների հյուրերին և մասնակիցներին սպասարկելու համար:

Այս ծրագրի իրագործման համար նախատեսվում է ներդնել մոտ 1 000 000 000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ գումար, ինչպես նաև ստեղծել մոտ 50 աշխատատեղ տեղի բնակիչների համար: Բացի այդ, կլինեն որոշ աշխատակիցներ Վայք քաղաքից դուրս նաև Վայոց Ձորի մարզի այլ շրջաններից:

Ծրագիրը նպաստելու է նաև զբոսաշրջիկության և մեծ թվով մարդկային հոսքին դեպի Վայք քաղաք, որը ևս էական ներդրում կունենա Վայքի քաղաքի տնտեսական զարգացման մեջ՝ նպաստելով բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը:

Նշված ծրագիրը իրագործելու համար խնդրում ենք <<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ-ին վաճառել ք. Վայք, Երիտասարդական փողոց 5 հասցեում գտնվող <<Արևիկ>> մարզադաշտի հարակից տարածքը՝ մեկ հեկտար տարածքով:

<<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ
ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ
Տնօրեն՝
Ա.Լիսիկյան
ստորագրություն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 40**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱԶԱՏԵԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 49,67581 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ (ՀՈՂԱՏԵՍՔԸ՝ ԱՐՈՏԱՎԱՅՐ) ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն համարվող Ազատեկ գյուղում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 49,67581 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 67500 (վաթսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ՝ 1 հա-ի համար, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 5 (հինգ) տարի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱՉԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 41**

ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ/ԿԱՄ/ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻՑ ԱԾՈՒՐԴԱՎԱՐ և ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի <<Պետական եվ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի եվ օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետով

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝**

1. Հողամասը վարձակալության և/կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

- հանձնաժողովի նախագահ-Գևորգ Մարգարյան-համայնքի ղեկավարի տեղակալ
- հանձնաժողովի անդամ-Գագիկ Մուշկամբարյան-աշխատակազմի քարտուղար
- հանձնաժողովի անդամ-Նատալյա Հովհաննիսյան-աշխատակազմի ֆին. բաժնի պետ
- հանձնաժողովի անդամ-Ռոման Մկրտչյան-աշխատակազմի գլխ. մասնագետ
- հանձնաժողովի անդամ-Համլետ Գեղամյան-ավագանու անդամ

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովից աճուրդավար նշանակել հաձնաժողովի նախագահ Գևորգ Մարգարյանին, արձանագրող նշանակել աշխատակազմի քարտուղար Գագիկ Մուշկամբարյանին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 42**

<<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ-Ի ԵՎ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 2021թ. ՀՈՒԼԻՍԻ 28_ԻՆ ԿՆՔՎԱԾ <<ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ>> ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Փոխառուն կատարել է կողմերի միջև 28.07.2020 թվականին կնքված Գույքի անհատույց օգտագործման պայմանագրով ստանձնած՝ ք. Վայք, Երիտասարդական փողոց 5 հասցեում գտնվող <<<Արևիկ>> մարզադաշտի վերանորոգման և բարեկարգման պարտավորությունները, ինչպես նաև Փոխառուն կատարել է պայմանագրով նախատեսված ներդրումը, ավելին կատարել է պայմանագրով նախատեսված գումարի չափից ավել ներդրում՝ շուրջ 305,635,000 (երեք հարյուր հինգ միլիոն վեց հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ գումարի չափով: Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Տալ համաձայնություն <<Նորավանք սպորտային ակումբ>> ՍՊԸ-ի և Վայքի համայնքապետարանի միջև 28/07/2020թ կնքված <<գույքի անհատույց օգտագործման պայմանագրի>> 6.1 կետում փոփոխություններ կատարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ